

Տեղեկանք  
ներդրումային ծրագրերի վերաբերյալ

ՀՀ վարչապետի մարզային այցելությունների ընթացքում տրված հանձնարարականի կատարման արդյունքում ՀՀ մարզերի կողմից ներկայացվել են մոտ 110 ներդրումային ծրագրերի հայտեր, որոնք հավաքագրվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունում, հստակեցվել և կազմվել են այդ ծրագրերի անձնագրերը:

ՀՀ վարչապետի մոտ քննարկվող ծրագրերն իրենց անձնագրերի հետ միասին ներկայացվել են ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների ու գյուղատնտեսության նախարարությունների, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական բանկի քննարկմանը: Այնուհետև, ստանալով և ամփոփելով նշված գերատեսչությունների կողմից ներկայացված ծրագրերի վերաբերյալ կարծիքներն ու դիրքորոշումները, այն ծրագրերի անձնագրերի հետ միասին սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարություն:

Սույն թվականի փետրվարի 13-ի դրությամբ ՀՀ վարչապետի մոտ քննարկվել են ՀՀ Գեղարքունիքի, Վայոց ձորի, Շիրակի, Տավուշի, Արագածոտնի, Սյունիքի, Լոռու մարզերի թվով 70 ներդրումային ծրագրեր: Նշված ծրագրերից հավանության են արժանացել մոտ 40 ծրագրեր: Շուրջ 15 ծրագրեր վերադարձվել են ներդրողներին՝ իրենց ծրագրերը հստակեցնելու, լրամշակելու և կրկին ներկայացնելու նպատակով:

Ներկայումս ընթանում են հավանության արժանացած ծրագրերի հստակեցման, աջակցության տրամադրման ուղղությունները, այդ թվում վարկային փաստաթղթերի և գրավադրվող գույքի ուսումնասիրության աշխատանքները տարբեր գերատեսչությունների կողմից:

Դրա հետ մեկտեղ, հաշվի առնելով, որ դեռ շարունակվում են ՀՀ մարզպետարանների, այլ գերատեսչություններ և ներդրողների կողմից ներկայացվել ներդրումային ծրագրեր, ներկայումս ընթանում են այդ ծրագրերի ուսումնասիրության աշխատանքները: